28

# ԱԶԴԱՐԱՐ

## ԴԱՄԱՅ ԱՄՍՈՅ

1794

Պարունակութիւն Ամսական միոյ, զոր գրեալ եղև յԵր Երկօրեայ 'ի Ծերէ մոյ, շարագրեալ կարգաւ Ազգիս, աշխատեցեալ անօգնական, և 'ի վաղեմանէ եգէտ շնորհաւորութիւն կարողութեան օգնական լինել աշխարհաց։
Թարգմանեալ Յանգլիացւոց։

Էր այր մի աղքատ, ծեր, և կաղ, զոր բնակէր 'ի մէջ մարգագետնոյ 'ի Հիւսիս կոյս Անգլիոյ։

Սա յառաջագոյն էր զինուոր, և այժմ ոչ ունէր օգնական ինչ միայն 'ի պատճառս վիրաց զոր ընկալեալ էր 'ի պատերազմի' յորժամ մարտնչէր ընդ թշնամեաց քաղաքին իւրոյ։

Ողորմելին այս յորժամ եգիտ զանձն իւր յայսպիսի տկարութեան, շինեաց վն իւր զփոքրիկ իմն խրճիթ շաղախով, և ծածկեաց դալար խոտով։

Ունէր սակաւ մի տեղ իբր պարտիզի զոր սովորութիւն արար ինքնին ձեռամբ իւրով հնձել, որով լցուցանէր զկարիս իւր գետնաբերիւք և բուսեղինաւ, և բաց 'ի յայսոցիկ շահիւր երբեմն և սակաւ ինչ դրամս, բանալով զդուրս վն անցաւորաց, որ էր մերձ տան իւրոյ, և արդար և յայսմանէ ոչ գտանէր բազում վարձս' որովհետև անցաւորք սակաւք անցանէին ընդ այն ճանապարհ։

Այլ.

Ուլ զոր ինչ 'ի վաստակոցս յայսմանէ գտանէր կարի բաւական լինէր նմա առ 'ի գնելոյ զհանդերձս և լուացանելոյ զսակաւիկ հարկաւորութիւնս զոր ունէր :

Եւ թէպէտ տնանկէր բայց իրաւի էր սա այր վեհանձնեայ և համեստ, և երբէք ոչ տխրանայր թէ յառաւօտու և թէ. 'ի գիշերի առ 'ի մատուցանել զաղօթս իւր առ Ած որով յոյժ պատուելի եղև յաչս յայնց ամենեցունց որք ծանօթ էին նմա քան զնոսա որք առաջինիքն էին քան զնա թէ ազգաւ՝ և թէ հարստութեամբ :

Յաւուր միում յորժամ գնայր արտաքոյ այգւոյն՝ եգիտ փոքրիկ ուլ մի այծոյ զոր կորուսեալէր զմայրն իւր և իբրև կիսամահ երևէր 'ի պատճառս սովու, էառ զայն ընդ իւր 'ի բնակութիւնս իւր կերակրեաց նմա 'ի բերոյ այգւոյ իւրոյ, և պաշտպանելով սնոյց զնա մինչև զարգացաւ և զօրութ[illegible] զօրացաւ :

Փոքրիկ նէնա (այսինքն ուլս քանզի այսպիսի անուանեաց ծերն) հատուցանէր նմա զերախտիս իւր և այնքան ընտելացաւ նմա որպէս սկունդ :

Տիւն ողջոյն արածէր զդալար բանջարս զոր կայր բուսեալ շուրջ զբնակութեան, և 'ի գիշերի ննջէր 'ի նմին յանկողնոջ տեառն իւրոյ :

Եւ այծս այս յաճախապէս ուրախացուցանէր զտեառն իւրոյ կաքաւելով և առնելով զխաղս, զգլուխ իւր դնէր յարաժամ 'ի գոգս ծն իւրոյ, և ուտէր զբաժինս հացին զոր պարգևեալէր տեառն իւրոյ, զոր նա և տէրն նորայ ոչ երբէք պակասէր բաժանելոյ ընդ մխիթարչին իւրոյ :

Ծերս այս երբեմն հայէր սմա լռելեայ՝ ցնծութեամբ և միամիտ սրտիւ տարածէր զձեռս իւր երկինս և շնորհընկալ լինէր յարարչէ, զոր մինչ 'ի հասակս ծերութեան՝ և 'ի մէջ այնքան տառապելութեան, և 'ի նեղութեան, պարգևեաց նմա մի հաւատարիմ բարեկամ :

'Ի գիշերի միում 'ի սկզբան ձմերայնոյ ծերունիս այս կարծեաց թէ լսէ զձայն նուաղեալ լալոյ և աղաղելոյ մանկան միոյ, և որպէս սա բնութեամբ ողորմածէր՝ յարեաւ վաղվաղակի և վառեաց զճրագս իւր և ել 'ի բնակութէ իւրմէ որոնել զձայն

կողմունս, և ոչ էր անցեալ ժամն բազում մինչ որոնէր՝ ետես զմանուկ մի զոր արկեալ էր անդ յամանց տնանկաց:

Ծերս այս եկաց հիացեալ և ոչ գիտէր զինչ գործել, և սկսաւ խօսել ընդ միտս իւր և ասէ:

Ես՝ զոր այժմիկ տեսանեմ թէ որ քան դժուարութ է ապրիմ յանձնառանից զգուշութիւն անօգնական մանկան միոյ՝ որ զամս բազումս ոչէ հնար սմա աշխատակից լինիլ կես վասն կեցութեան իւրոյ:

Բայց ողորմեցաւ մանկանն և կրկին ասաց, որպէս խնայեցից զօգնականութիւնս իմ կենդանւոյ յոյժ ողորմելւոյ քան անձին իմոյ:

Մի թէ արարիչն զայն՝ զոր կերակրէ թռչնոց անտառաց, և գազանաց վայրենեաց, և որ խոստացաւ օրհնել զնոսա որք ողորմած գտանիցին, ոչ կարէ օգնել տկար կարեացս իմոց, վերջապէս ասէ տարայց զսա 'ի գիշերի յայսմիկ 'ի բնակութիւնս իմ, կերակրեցից և յագեցուցից զսա, քանզի եթէ ոչ ընկալնուցում զսա 'ի բնակութիւնս իմ, ողորմելի անտէրս այս 'ի ցրտոյ մեռանիցի յառաջ քան զարշալոյսն:

Խորհելով այսպէս էառ զմանուկն 'ի գիրկս իւր և ետես զի էր տղայ առողջ և գեղեցիկ ծածկեցեալ էր ընդ կտոր մի կտաւոյ: Փոքրիկ պանեալ մանուկս այս երեւիւր թէ խելամուտ էր շնորհին նմա, և ծիծաղելով ընդ երեսս ծերոյն տարածեաց ըզնուաստ և զփոքրիկ բազուկս իւր առ 'ի գրկել բարերարին իւրոյ:

Ցորժամ եբեր նմա 'ի բնակութիւն իւր սկսաւ արտմիլ և հոգալ թէ որպէս հոգասցէ նմա կերակուրս, բայց հայելով առ նէնն (այծիկն առ այծն) մտածեաց խելոյն թէ այծն այն ասկայ ժամանակէր զորմէ հետէ կորուսեալ էր զուլն իւր և ետես զի ստինն լցեալ ունէր կաթամբ, կոչեաց զայծն առ իւր և ընծայելով զմանուկն 'ի ստինս նէնին՝



ցնծացաւ իրաւապէս, յորժամ ետես զմանուկն զի դիէր զկա-
թն այնքան բնական՝ որպէս թէ գտեալ իցէ զմայրն իւր, իսկ
այծն ևս երևիւր հաճեցեալ ՚ի գործոյ մանկանն և հնազանդ էր
թարց հանդիմանութեան առ ՚ի կատարել զհարկս դիեցուցչի ։

Հաստացաւ ծերս այս փորձառութեամբ և կատեաց ըզ-
մանուկն վասն ցրտոյն այնքան զոր կարնէր, և չոգաւ հանգչիլ
ուրախութեամբ զի արարեալ էր զմարդասիրութեան գործս զայս ։

Իսկ ՚ի միւսում առաւօտու զարթեալ վաղվաղոյն ՚ի ձայնէ
մանկանն զոր լսէր վասն կերակրոյ, և օգնականութեամբ հաճա-
տարիմ նէնին. ( այսինքն այծոյն ) ետ նմա զկաթն որպէս արա-
րեալ էր յանցելումն գիշերի ։

Գոս. Библиотека ՀՍՍՌ-Арм.ССР им. Мясникяна Մյասնիկյանի անվան

Իսկ յորժամ ծերս սկսաւ երկայնամիտ լինիլ յաղագս կե-
նաց մանկանն՝ և նեղութեանցն իւր, զոր ըստ համարողութեան
իւրոյ՝ յոյժ անտանելի կարէր վերծանիլ ՚ի հոգւոյ նախութենէ ման-
կանս այս, և սկսաւ խորհիլ ՚ի միտս իւր և ասել, ո՞վ գիտէ, ասէ,
եթէ ոչ արարիչն միայն զոր պահապանեաց զմանուկս զայս այսպիսի
զարմանալի կերպիւ՝ գուցէ թէ պատրաստեալ իցէ բան ինչ հա-
մեմատ հրաշալեաց ՚ի կեանս ապառնի նորա, և օրհնեցէ զիս
իբրև խնդրէ սատար հրամանի իւրոյ, վերջապէս ասէ որքան
զարգանայ մանուկս՝ այնքան մխիթարութիւն և ուրախութիւն
ինձ յայսմիկ միայնակ անապատիս, և օգնական լինելոց զիս ժողո-
վել ղեկաւիս, վս այրելոյ՝ և հնձեսցէ ընդ իս զայգիս իմ, այսու,
մտածութեամբ յոյժ և յոյժ դ[illegible] լինէր առ գտեալ մանուկն,
զոր յետ սակաւ ժամանակի՝ ուսուց ճանաչել զծերն իբրև զհայր
և զպնտանի իւր, և ուրախ առնէր նմա մանկական գործով իւ-
րով, և լուռ նշան, այսինքն այծն այն. յոյժ պաշտպան էր իւր ու-
նելով զայնպիսի որդեգիրս, զոր համարէր թէ իւր սեփական
ձագն իցէ, յորժամ մանուկն ՚ի դուռն առեալ ընթանայր
առ այծն, նա խկայն նմջէր ՚ի վերայ հողոյ՝ և տայր նմա զկաթն
՚ի կերակուր, և յորժամ լցուցանէր զփորս նորա, դնէր զնա
՚ի վր ստեանց իւրոց, և այնպէս նմջէր մանուկն ՚ի գիրկս այծին։

Զարմանալի իմնէր տեսանել, թէ զի որդ մանուկս այս
այսպէս զրկեցեալ ՚ի մօրէ՝ և յամ փափկութենէ՝ զարգանայր
զօրութեամբ և հասակաւ, և զուրկ յայնպիսի փափկութենէ
զոր վայելէ մանկանց, սա անձամբ իւրով յոյժ բարեձեւ զօրա-
նայր և ՚ի հայեցողութենէ ապանկերին՝ երևէր նշան առող-
ջութեան։ Եւ ՚ի յայնքան փոքր հասակի, զոր այլք մանկունք
դժուարապէս կարեն կանգնել օգնականութեամբ դիեցուցչի
զայս գտեալ մանուկս կարէր վազել միայնակ, և իրաւիք զի թէ
պէտ էր ըստ ամ սահուր ՚ի կենալն իւրում՝ և անկանէր ՚ի վր գետնի,
բայց գետնին յոյժ փափկագոյնէր և մանուկս (զոր ծերն եդեա-
լէր զանուննն փոքրիկ Ջէկ) չէր այնքան փափուկ և դալար, և ոչ
ինչ համարէր զանկումն իւր՝ և վերստին դողութ[illegible] կանգնեալ
պնդէր զճանապարհս իւր, և ՚ի սակաւ ժամանակի փոքրիկ Ջէկս
եղև կատարելապէս զօրութիւն ծնկաց իւրոց, և. որպէս ամայն
մեր

մերձենայր, երթայր ընդ մօրն իւրոյ (որոյ ինքն այծոյ) ՚ի դուրս և սկսեալ խաղայր ընդ նմա ժամս ինչ, անկանելով ընդ ստեանս այծուն, փարելով զպարանոցաւն խանդաղատեալ կայտառելով, և այնպիսի խաղայր՝ որպէս թէ իցէր իբրու այպէս ձագ նր:

Իսկ եթէ ՚ի զգեստուց, որոյն կամիցիս տեղեկանալ. փոքրիկ չէկն ոչ էր ծանրացեալ այնու, ոչ ունէր զկօշիկս՝ և ոչ այլինչ կերպ հանդերձի, քանզի եղանակն չերմէր և չէկն զուարճանար գտանելով զանձն իւր այսպէս թեթև վասն ուղիղ կառարելոյ զամենայն խաղս իւր:

Իսկ յետ սակաւ ժամանակի չէկս սկսաւ ուսանիլ զձայնս ծեր հօր իւրոյ՝ և մօրն այծու, և ՚ի փոքու ժամանակի ուսաւ խօսել կարգապէս:

Ծերն մխիթար լինէր յոյժ մանէ; և նստուցանէր նմա յարաժամ ՚ի վերայ ծնկաց իւրոց՝ և խօսէին ընդ միմեանս ժամս բազումս ՚ի միասին (յորժամ կերակուրն պատրաստիւր ՚ի կաթսայի ՚ի վերայ հրոյ:)

Որ աւուր զարգանայր և առաւել օգնական լինէր հօրն իւրոյ, այնքան՝ մինչ հայրն նորայ կարէր հաւատալ նմա, զգուշութիւն դրան որ էր յանդս ճանապարհին, և եթէ հայրն ոչ իցէր ներկայ, մանուկն այն բանայր:

Իսկ վս խոհարարութեան սակս կերակրոց իւրեանց ոչ յետ բազում ժամանակաց, կարաց չէկս գործել զհաց՝ և եփել այլ ինչ կերակուր, կատարելապէս քանզի առնէր հայրն նորա:

Իսկ ՚ի գիշերի ձմերայնոյ, ծերն այս պատմէր որդւոյ իւրոյ յանդս անցից մանկութեան իւրոյ, թէ պատերազմին զոր մարտուցեալէր, և թէ ամբոցմանն զոր փախեալէր և զժամ ամատրիկ նեղութիւնն այնպիսի քաղցի և փափագմամբ պատմէր նմա՝ մինչ զի թէ մանուկն այն ոչ երբէք ծուլանայր ՚ի լսել, բայց ՚ի մէջ այսքան պատմութեանս, առաւելապէս ուրախանայր չէկն զոր անանէր զհայրն իւր առեալ զաւազանն իւր փոխանակ հրացանի, և ասէր. այսպէս ❀ յանձ յահեակ ուղղեալ հուր տուր՝ երթ սպանեալ զոր զայս ամ չէկն մինչ խօսել կարացաւ՝. գիտէր և ասէր, յորժամ չև ևս էր հասեալ ՚ի մեծ ամաց, առնէր զոյալով՝

❀ [illegible]
և

և ուղղէր զփայտ մի որ հայրն իւր վասն այն իսկ պատճառին
տուեալ էր նմա, և առնէր զամ շնորհիւ. որպէս մարթ էր զօ-
րաւորի ումեմն և ճրօպացուց առնել այնքան փոքու հասակի :

Ցերբս այս, ուսուցանէր մանկանս այդու ոճիւ զամ հարկս
հաւատոյ՝ և քանականութեան, այնքան պարզապէս զոր կարէր,
և ասաց մանկանն չէկ մի երբէք սուտ ինչ խօսեսցես թէ և
''մաշկեսցեն զքեզ կենդանուն քանզի զինուորն ոչ երբէք ստէ.



Ջէկն բարձրացուցեալ զգլուխս իւր ընթանայր 'ի
յայգւոջ իւրում և խոստոյաւ հօրն իւրոյ զի ինքն յարաժամ խօ-
սեսցէ զճշմարտութիւն որպէս զինուոր :

Յայց ծերն, զի 'ի մանկութեան իւրում երբեմն 'ի
դպրատանէր լեալ, առնէր զմեծագոյն փափակ, զի և որդին իւր
ուսանիցէր գրել և ընթեռնուլ, և զայս գործ իրաւի դժու-
արին իմն էր, քանզի ոչ ունէր զգրեանս՝ և ոչ դրիչ և թուղթ
'ի քնակութեան իւրոյ. վերջապէս, որպէս զաշխատանն կարեւոր
առնէ մեզ յաղթել ամ դժուարութեանց, նոյնպէս և սոքա 'ի
ժամանակս ամարայն յորժամ նստէին առ դրունս իւրեանց, գծա-
գրէր զնշան տառից 'ի վերայ հողոյ և ուսուցանէր Ջէկին անուա-
նել զնոսա, այսպէս մինչև ծանօթացաւ Ջէկն բոլոր աքուբենից,
յետ այնորիկ առաջացաւ առ վանկն՝ և յետոյ առ բառն :

Զայս ամ փոքրիկ մանուկս այս յոյժ հեշտութեամբ ուսաւ
արտաբերելն, և որպէս մանուկս այս յոյժ սրամիտ էր առ 'ի օրի-
նակել զոր ինչ տեսանէր՝ այնպէս ոչ թէ միայն կարաց ընթեռ-
նուլ

նուէ զբաղումն այլեւ գրեր զգիրս եւ ջարդէր ՚ի վերայ հողոյ :

՚Ի ժամանակի յայսմիկ տարաբախտ այծն այն զոր դիեցուցանէր Ջէկին այնքան հաւատարմութեամբ, հիւանդացաւ՝ եւ մեռաւ, ոչ խնայէր երբեք Ջէկն զծառայութիւնս իւր ՚ի նմանէ ՚ի ժամանակս հիւանդութեան նորայ :

Բերէր յարաժամ զխոտս դալարս վասն կերակրոյ՝ եւ յաճախապէս հանգուցանէր զգլուխս իբր մօրն իւրոյ ՚ի վերայ դրկաց իւրոց :

Բայց զայս ամ ընդունայն եղեն, կորոյս զմայրն իւր՝ եւ մնաց ժամանակս բազումս անմխիթար, վասն զի թէպէտ Ջէկն յոյժ խոհեմ էր բայց զերախտիս եւ զգութս նորա յարաժամ ունէր ՚ի մտի :

Ոչ կարէր սա խօսիլ պարզապէս ՚ի սիրոյ փափկութեան, խոհեմութեամբ՝ որպէս բազումք ՚ի մանկանց զոր ունէին զայս շահեցեալ ուսմամբ, բայց զայս ամ զգայր ՚ի սրտի իւրում :

Իսկ որովհետեւ յոյժ բնական է մեզ սիրել նմա որ սիրէ մեզ՝ այսպէս, եւ սա ոչ կամէր ներհակ սմին գտանիլ :

Տարաբախտ այծս այս թաղեցաւ ՚ի յայգւոջ ծերոյն եւ փոքրիկ Ջէկն յաճախապէս ընթանայր անդ եւ գոչէր առ մայրն իւր Նէն, հարցանելով ընդէ՞ր թողեր զիս :

Յաւուր միում յորժամ յայսմ գործոյ էր Ջէկն պատահեցաւ տիկնոջ միում որ անցանէր հեծեալ ՚ի կառս եւ լուաւ զձայն բանս (այսինքն կոծս Ջէկին) յառաջ քան զվերջինսն, Ջէկն փութացաւ ՚ի բանալ զդուռն՝ տիկինն սպասեաց եւ էհարց նմա թէ վասն ՚ի՞մ կոծես առաջելով եւ գոչես :



Պատասխանեաց Ջէկն թէ վասն ողորմելի մօր իմոյ՝ զոր թաղեցեալ կայ յայգւոջս յայսմիկ :

Տիկինն ոչ հաւատայր և զարմացեալ կայր լսելով զայսպիսի հանգստարանէ, և վասն որոյ յառաջացեալ հարցմամբ, ասէ. որպիսի՞ կերպիւ մայր քոյ կեար աստ, որոյ պատասխանեալ ասէ յուրաժամ՝ արածէր աստ տիէն ողջոյն :

Տիկինն այն դեռևս 'ի հիացման կայր՝ այլ ծերն այն եւ արտաքս 'ի բնակութենէ իւրմէ և պատմեաց նմա զանցս ամ՝, զոր հիացմամբ մեծաւ զարմացոյց Տիկնոյն, թէպէտ Տիկինն այն յոյժ աշխարհատեսէր, և ընթերցեալ բազում պատմութիւնս, այլ երբէք ոչ էր մտաւ ածեալ թէ կարելի էր մանկան միոյ զարգանալ այնքան զօրութեամբ, ունելով զկաթն այծոյ փոխանակ ստեան :

Հիացեալ՝ ընդ պատանիս նայէր տիկինն և հաւանեցաւ կերպարանաց նորայ գովեաց զգեղեցկութիւնն և զօրութեն նորա և ասէ, փոքրիկ մանուկ կամիս գալ ընդ իս՝ և ես բարի արարից քեզ, եթէ վարեսցիս բարեպէս, առ որ պատասխանեաց Ջէկն և ասէ, ոչ, այլ կացից և բնակեցայց ընդ հօրն իմոյ, քանզի նա հոգս բազումս տարաւ 'ի վերայ իմ զամս բազումս՝ զոր այժմ հարկէ ինձ առնել և հատուցանել հօրն իմոյ փոխարէն ամի, եթէ ոչ իրաւի ուրախ լինէի բնակիլ ընդ տիկնոջ միոյ հեզաբարոյի՝ և քաղցրասրտի, որպէս տեսի քեզ :

Տիկինս այս ոչ տրտմեցաւ պատասխանոյ Ջէկին, և տարեալ զձեռս իւր 'ի ծոցս հանեալ ետ նմա զմի դրամ առ 'ի գնելոյ զկոշիկս, և զգդանելիս ոտից ( այսինքն մէզ ) վասն իւր, և չոգաւ 'ի ճանապարհս՝ իւր :

Ջէկս բարեպէս ծանօթ էր գործածելոյ դրամոյն, քանզի յանխնայաբար առաքեցեալ լինէր 'ի հօրէ իւրմէ մերձակայ գիւղօրայս, առ 'ի գնել զհարկաւորութիւնս իւրեանց, բայց բոլորովին անտեղեակ էր 'ի կօշկէ և ագանելեաց զոր ոչ երբէք 'ի կեանս իւր զգեցեալ էր զայնպիսի ինչ :

'Ի միւս առաւօտու, ծերն այն հրամայեաց Ջէկին ընթանալ փութանակի 'ի գեօղն՝ և գնել զոր ինչ տիկինն հրամայեալ էր նմա, քանզի անպատիւ մտածէր անհնազանդ գտանիլ հրամանի նորայ, և կամ վատնել զդրամն այլ իմն ճանապարհաւ :

Յետ

Յետ գնալոյ Ջէկին սակաւ ժամանակաւ, դարձաւ 'ի յետս, և զարմացաւ ծերն տեսանելով նմա բոկ որպէս գնա-ցեալ էր։

Ո՞վ Ջէկ ասէ, ուրեն կօշիկք և տգանելեքն քո, զոր դու գնել պատէիր, Հայր պատասխանեաց Ջէկն և ասէ չոգայ ես 'ի խանութս կօշկակարաց՝ և առեալ մի զոյգ 'ի նոցանէ, փորձել կամեցայ, բայց այնքան նեղեաց զիս՝ մինչ ոչ կարէի քայլել, և ոչ երբէք ասէ զգեցայց զայնպիսի ինչ՝ թէ և տիկինն այն վերստին տայցէ զիս մի գրամ միայն վասն առնելոյ, և գրամն զայն եդեալ 'ի քսակս հանդերձի իմոյ՝ պահեցից վասն քո, վասն զի ձմերն գայ, և դու երևիս յոյժ երկչոտ 'ի ցրտոյն քան զ յառաջ։

Թագուհ այսպիսի բարեվար նշանս յուցանէր Ջէկն՝ յոր մէ մարթէր մտածել զի ունիցէր առատ սիրտ՝ և բարի բնութի մի պակասութեամբ Ջէկս պակասաւոր գտանիւր, և էր՝ զի թէ պէտ բարի բնութեամբ պատանիէր այլ փոքր ինչ հպարտէր վասն պատուոյ իւրոյ, հայրն իւր ուսուց նմա զգործածութիւնն ձեռաց և ոտից 'ի մարտնչել և Ջէկս այնքան վարժեալ եղև 'ի նոյն արհեստին բռամբ՝ (այսինքն մշտի) որ հարկանել կարէր զամ մերձակայ պատանեաց հասարակակցաց իւրոց, և ընկերաց։

Թէպէտ թէ իցէր և ամն բարձրահասակ քան զնոքն՝ այլ Ջէկն ոչ երբէք զանազանէր, բաւականէր թէ նոքա ասիցէ-ին զբան իմն ընդդէմ պատուոյ իւրոյ։

Իսկ 'ի միւս ժամանակս կարի համեստէր և խաղաղասէր քան զամ մարդ որ 'ի վերայ երկրի։

Յաւուր միում առաքեցեալ էր 'ի դեօղն՝ դարձաւ յետս ունելով զաչս սևացեալս և զերեսս իբրև կարի երկիւղալի և դժուարութեամբ կարէր քայլել, այնքան վտանգաւորեցեալ 'ի պատճառն գանից զոր ընկալեալ էր։ զի՞նչ գործէիր, եհարց ծերն, Ո՛չ ինչ ասէ միայն մարտնչէի ընդ դիկ մսագործին։

Պատրեաս զիս ասէ ծերն, քանզի նա երկիցս մեծէ քան զքեզ, և գերագոյն մարտնչօղ բովանդակաց յայսմիկ գիւղոջս։

Ոչէ այդ փոյթ ասէ Ջէկն նա անգոսնեաց զքեզ և ասէր զքէն իբր այր ոմն ծեր մուրացիկ, և վասն այն հարի նմա՝ իմ յաւել, և ես հաքից եթէ կրկին կոչեսցէ զքեզ այնպիսի, թէև նա

հար

հարցէ զիս կարի սաստկագին, վասն զի դու գիտես հայր, զի դու-ն ես մուրացիկ այլ զինուոր ։

Այսպիսի կենօք ապրէր փոքրիկ Ջէկն մինչև էհաս 'ի երկոտասան ամս հասակի, և յայնժամ ապրմեալ ծեր հայրն իւր հիւանդացաւ' և անկաւ 'ի մահիճս, և ոչ կարէր շարժիլ ։

Ամենայն զգուշութեամբ ծառայէր Ջէկն 'ի յամ գործս եփէր զպորգանակս ու պխաշու վասն նորա' և կերակրէր ձեռամբ իւրով, և տքնէր զգիշերն ողջոյն մերձ զմահճին, օգնական լինէր հօրն յորժամ կամէր շրջիլ 'ի մահճի ։

Բայց այս ամ ընդունայն եղև քանզի հայրն իւր օրըստօրէ 'ի տկարութիւն անկաւ, և իբրև անկարելի երևեր իւր առողջանալն' վերջոյ յաւուր միում կոչեաց զՋէկն առ մահիճս իւր և ձգեաց զձեռն նորա 'ի վերայ սրտի իւրոյ' և ասէ' հասեալ է որդեակ իմ զժամ մահուան իմոյ ։



Եհեղ փոքրիկ Ջէկն զարտասուս իբրև զաղբիւր յորժամ լուաւ զայս ։

Բայց հայրն' իւր աղաչեաց զի վերանորոգեսցէ զինքն' և անսասցէ վերջին խորհրդեանցն զոր կարէ տալ նմա ։

"Կեցի ես ասէ զամս բազումս 'ի չքաւորութեան, բայց ոչ գիտեմ եթէ իրաւի մտադրոյն եղէ քանզի թէ հարուստ իցէի․ 'ի բազում սպասմանէ հեռացայ' զոր մարթ էր որդայթս լինել անձանիլ թէ այլ ոչին կացութեամբ իցէի, և թէպէտ 'ի բազմիցս կարօտանայի կերակրոյ' և զայն 'ևս հալած գտանէի, բայց վայելեցի այնքան պառողջութիւնս և զկեանս զոր կարելի էր գերագոյն

դուն քան զիս վիճակիլ ։

Այժմիկ մերձեմ 'ի մեռանիլ, քանզի զգամ զայդ յամ կողմանց ։ Հոգիս փութանակի ելանելոց է յինէն, և յետ այնորիկ դիցեն զիս 'ի ներքոյ երկրի և որդունք կերիցեն ողորմելի հայր քո ։

Աստէն սկսաւ Ջէկն կրկնել զարտասուս իւր և զհառաչանս վասն զի ոչ կարէր հանդուրժել ։

Բայց ծերն սկսեալ ասէ, համբերեա որդեակ իմ, թէպէտ թողում զաշխարհս այս, այլ որպէս յարաժամ համեստ եղէ ես և ջանացայ ոչ սակաւ կատարել զհարկն մարդոյ՝ վասն որոյ ոչ երկեայ իմ, զի ած ողորմելոց է զիս և տանելոց է զիս 'ի տեղի գե-րագունի ուր յոյժ երջանիկ եմ լինելոց քան զոր էի աստ ։

Այսէ զոր ինչ մինչև ցայժմ ուսուցի քեզ, և՛ այսու յուսով և հաւատով միայն՝ ունիմ մեծապէս ուրախութիւն 'ի վերջին կէտի իմոյ ։

Բայց մի միայն տխրութիւնն որ ունիմ վասն քոյ է որ-դեակ իմ զի թողում զքեզ թարց պաշտպանի ։ բայց դու ես զօ-րեղ՝ և աշխատասէր, և կարես գտանել վասն քոյ կերակուր, և յորժամ մեռայց ես, երթ վանականի 'ի գեօղն և ասա առայ անդ որպէս զի եկեալ թաղեսցեն զիս ։

Իսկ դու յետ այնորիկ ջանա գտանել զգործ իմն՝ և աշխատեա վասն կենաց քոց, և եթէ դու իրաւապէս զգաստ և համեստ իցես, ոչ երկեայ իմ զի գտանելոց ես վասն մարմնոյ քոյ զկերակուր, և ած որ է հասարակապէս հայր ամենեցուն՝ պահպա-նելոց է և օրհնելոց դքեզ ։

Ողջ լեր որդեակ իմ զօրանայ տկարութիւնս իմ յոյժ յոյժ ; մի երբէք մոռասցիս զողորմելի ծեր հայրն քո՝ և ոչ զբարի վարս նորայ զոր ուսուց և քեզ, բայց յամ աւուրս կենաց քոց՝ արա զհարկն քո՝ և կեաց իբրև զինուոր և քրիստոնեայ ։

Յորժամ ծերս այս կարի դժուարութեամբ արտաբե-րեաց զխրատաղայս վերջինս, ձայնն ընդատեցաւ՝ և անդամքն նուաղեալք և պաղեալ, և 'ի միջոց փոքր բոպէի հանգեաւ թարց յառաչանաց ։

Փոքրիկ Ջէկն որ անկեալ կայր 'ի վերայ մահճի հօր իւրոյ կոչեաց զնա ընդունայն, և ընդունայն եղեն ջանք նորա սակս

կը

կրկին կենդանացուցանելոյ, և 'ի վաղճանի՝ հանեալ զհանդերձս իւր անկաւ 'ի յանկողինս հօր իւրոյ, և աշխատեցաւ բազում անգամ իբր թէ կարասցէ ջերուցանել զնա 'ի ջերմութենէ անձին իւրոյ; բայց տեսանելով զամ աշխատանս իւր անպտուղ՝ յայնժամ հաւատաց զի իբրեւ մեռեալ է և զի այն ելոց դառնապէս, զգեցաւ վերստին զհանդերձս իւր՝ և չոգաւ 'ի գեօղն որպէս պատուիրեցեալէր 'ի հօրէ իւրմէ:

Ողորմելին պատանիս այս, այսպէս անօգնական մնաց և ոչ գիտէր զինչ գործել, բայց ոմն 'ի յերկրագործաց զոր ծանօթ էր նմա յառաջագոյն, յանձն էառ բնակեցուցանել նմա զամիս ինչ 'ի տան իւրոյ մինչև կարիցէ նա գտանել գործ ինչ:

Ջէկն յոյժ շնորհակալ եղև 'ի շնորհաց նորա, և հաւատարմաբար ծառայէր նմա զամիսս բազումս:

'Ի ժամանակի յայսմիկ ուսաւ Ջէկն կթել զկաթն, և վարել զերկիր, և ոչ երբէք խնայէր զինչ և իցէ գործ զոր կարէր կատարել:

Բայց տարաբախտապէս բարեբարոյ երկրագործս այս անկաւ 'ի հիւանդութիւն 'ի պատճառս ջերմութեան արեգական զոր առնէր զհունձս 'ի ժամ տօթոյ՝ և մեռաւ իբրև 'ի մուտս ձմերայնոյ:

Կինն յայսմ երկրագործիս հարկեցաւ արձակել զամ ծառայս իւր, և այժմ վերստին Ջէկս եղև անտէր, և անգործ 'ի վերայ երկրի, ունէր միայն զպատմուճանս իւր և դրամ մի 'ի քսակի իւրում՝ զոր կինն տեառն իւրոյ շնորհեալէր նմա:

Տրտմեցաւ Ջէկն յոյժ վասն կորստեան տեառն իւրոյ: Բայց տեսանելով զինքն մեծացեալ և զօրացեալ՝ մխիթարեցաւ զի գտանելոյէ գործ ինչ, վասն որոյ ել վաղվաղակի 'ի փողոցս և շրջէր ընդ ամ տեղիս և հարցանէր ամենեցուն վասն գործոյ իմիք, ուստի այլն ունէր գործ ինչ գտանել:

Բայց այս ջանացողութեանս տարաբախտութիւն դիպեցաւ նմա: քանզի ոչ ով կամէր օտարականի միոյ մուծանել 'ի գործս իւր, թէպէտ վարէր նա զկեանս իւր յոյժ չքաւորապէս՝ այլ ոչ գտանելով գործ ինչ, փութով էհաս տառապելութիւն մինչ զի ոչ ունէր զբնիոն իմն 'ի քսակի՝ և ոչ և պատառ մի հաց ու-

տե-

տելոյ, Ջէկս վասն այսր ամի ոչ ունէր այնպիսի բնութիւնս որպէս զի յուսահատիցի, շրջեցաւ սիրտն ողջոյն վասն գտանելոյ գործ, և 'ի յերեկոյին հանդիպեցաւ նմա սաստիկ մըրիկ՝ և անձրև, զոր թացեալ եղև անձամբ. քանզի ոչ կարէր գտանել զբուրն հովանի:

Այժմիկ անտերունչ Ջէկս այս 'ի միտ էած զծերունին հայրն իւր՝ և զմխիթարութիւնն զոր յառաջագոյն վայելեալէր 'ի նմանէ, և զի յանժամ ունէր զբնակութիւն մի վս հովանաւորութեան և զհաց պատրաստ, և վս այս ամ յիշողութեանս կոծէր և ողբայր, և իբրև ետես զի ընդունայնէ զկոծս իւր՝ և զի հանդարտացեալէր զմըրիկն սակաւ մի, յարուցեալ չոգաւ 'ի ճանապարհս իւր յուսալով զի գտցէ տեղի դատարկ և կամ տուն մի ա- 'ի հովանաւորելոյ զանձին իւրոյ սակս անցուցանելոյ գիշերոյն:

Իսկ յորժամ այսպէս շրջէր տատանեալ, ետես հեռաստանէ զլոյս խիս վառեցեալ մեծ, զոր թուէր լինել բոց բազում հրոյ: Ոչ գիտէր Ջէկն զինչէր այս, և ըստ համեմատ ներկոյ կացութեան իւրոյ ոչ ինչ երկեաւ 'ի հրոյ այլ քաջալերեալ մերձեցաւ առ այն,



և իբրև մերձ եղև, ետես զմեծ շինուած խն որ ելանէր բոց և մուխ բազում, 'ի բազում պատուհանաց և լսելի լինէր ձայն հարկանելոյ՝ և զշնչումն շղթայից:

Երկեաւ նախապէս յայսմանէ, այլ յետոյ սրտապնդեալ սողեալ հողահայրթ 'ի գետնի, և անտանաբար հանդարտ ընթացաւ առ շինուածն, և հայելով 'ի պատուհանէ միոյ ետես զբա-

զուամ այրս և զմանկունս զոր գործէին, վառելով զբոցս՝ և եռա-
ցուցանէին զերկաթս 'ի մէջ քուրայն, յորժամ մխիթարութիւն եղե-
ունայնակեցութեան չէկին 'ի տեսանել զայս, և գտանելով դուռ-
մի բաց համարձակեցաւ մտանել 'ի ներքս և չոգաւ առ մի 'ի
կրակետղն և նստաւ մերձ առ նմին, յետ սակաւ ժամու տեսեալ
եղև 'ի մի 'ի յարանց յանմանէ զոր անդ գործէին, և էհարց նմա
բարկութ(եամբ) մ(իթ)է ինչ գործի եկեալ ես աստ, Պատասխանեալ չէկն
բազում խոնարհութեամբ և ասէ զի եմ ողորմելի պատանի ոմն՝
զոր շրջիմ յորաժամ առ 'ի գտանել զգործ ինձ, և զի ոչ էր ճա-
շակեցեալ զաւուրն, և էր թացեալ յորժ 'ի յանձրևոյն երեկոյին,
զոր մտաբերէր տեսանել զայն երևելի կերպից զգեստու նորայ ։

Կարի բախտաւորէր չէկն զի ընդ առն զոր խօսէր՝ բա-
րեբարոյէր, և վասնորոյ ոչ միայն եթող նմա ջեռնուլ հրով, այլ
և ետ նմա սակաւ մնացուածս ինչ 'ի կերակրոց, վասն ընթրեաց,
և յետ այնորիկ ետուն նմա մի 'ի կողմանց անկեան տանն յանկիւն
ուր ննջեաց չէկն հանգստութեամբ մինչև ցառաւօտն ։

Զմնացորդ պատմութեանս, պահեցուք Ա.Հ. 'ի միւս աշխատա-
րոյն ընծայել ։

Այր մի յորժ չէ յառաջ՝ անճարակ եղեալ, խորհեցաւ ընդ կնո-
ջն, առ 'ի գտանել զելս բարուք կեցութեան իւրեանց ։
ասէ կինն ցայրն ահա տրտմութիւն քաղցր մերոյս դաշտ ընդարձակ՝
և 'ի նմա ծով բոյսք վայրի զոր պատրաստեալ ծծ, որպէս և ընչա-
քաղցք կարեւոր սակս հարկաւորութիւն ընչեղաց, և ըստ աշխա-
տանացն սակաւ վարձս ընդունէին և անցուցանէին զաւուրս կենաց ։
արդ՝ զի 'ի տան մեր բում պատրաստ առասան և տապար, այլ և
խարտոց՝ կարողես և դու աշխատել որպէս նոքա, ընդ այս զուար-
ճացեալ առնն փառս ետ այս ասելով, իրաւի զնակինն պատկէ առն
և օգնական նմա, բայց ասէ ով գովելի տիկին իմ զոր ասացեր՝
առ

• առ ՚ի պատրաստ լինիլ սակս յառաջադրեալ գործոյդ ։ յարեալ կինն փութանակի որոնեաց զամ զտունն, եգիտ պարան մի փըտեալ բազմաժամանակեայ՝ ընդ նմին և խորգ մի պատառոտուն այլ և յուզէր զտունն ըն գտանիցէ կացինն ( զի ընդ երեկօէր և կինն աչացու ) իբրև կարի հետազօտեաց՝ եգիտ շերեփ մի պտու արտաքոյն՝ և գտաց թէ կացինն իցէ, բերեալ եդ՝ յանկիւնս տանն ։ և վաղվաղակի յարուցեալ առն՝ փութանակի էառ զպատրաստեալ գործիսն ընթացաւ ՚ի դաշտս, եգիտ դժնիկ մի և ընդ արմատեալ պարանն՝ ընկէց և զխորգն, էառ շերեփն ուժգին էհար վիհացի դժնիկն, խնկոյն թէ կամէ զգլուխ շերեփին ( քանզի արշալոյս էր և այրն միականի )՝ կարծեաց թէ գլուխ տապարին բազմատեալ, սկսաւ որոնել այսր անդր, անճարակ եղեալ ։ ուխտեաց ընդ պաշտելին իւր՝ զի թէ գտանիցէ զկացինն՝ տայցէ շերփառն իւրեանց աշխուր մի, և մինչ այս խորհրդեամբն խարխափէր զձեռսն, յորպանեալ առ դժնիկանն, սաստիկ և չարաչար վիրաւորեցաւ ։ և մինչ ջանայր յառնել և ՚ի բաց կորզել ինքենէ զդժնիկն, եգիտ զգլուխ շերեփին բարկացեալ հոյհոյեաց զպաշտելին ասելով, անդութ և անողորմ փոխանակ գտանելոյ զկացինն, բոլոր անձս իմ վիրաւորեցեր՝ և ձեռամբ բերեալ զշերեփին պահանջես աշխուրն, կարծեմ թէ գտեալ էր զկացինն՝ ոչ զի բծանէի ՚ի ձեռաց քոց յաւէրտեան, յանժամ սրտնեղեալ և արտասուալից դիմօք ծախտէր զանձն իւր ասելով աւաղ՝ զի ՚ի մանկութենէ ոչ ետու անձն իմ ՚ի ուսումն բարի աշխատանաց, որ այժմ զաղքատութիւն իմ բարեաւ անցուցանէի՝ մինչ զի և պաշտելին իմ ոչ լինի ողորմելոյս ձեռն տու ։

Իմաստ առակիս՝ զայս ծանուցա    նէ ։
հոգալ զպէտս՝ կարեաց ցուցա    նէ,
Զանձինս կրթել՝ ՚ի մանկու    թենէ ։
անկիրթ մի ժամանել՝ ծերութի    ասէ,
՚ի ձեռն նեղութե՝ գրաւուն աղ    դէ ։
դիպուածս մուրիկիս՝ մեզ նշանա    կէ,
Յանաքաղ ամս՝ ոյր առակս    ոգէ ։
տրուպ ամենից՝ ուսմանց նիւ    զէ,
Զ թերութիւնս բանիս իւր ներել ժտէ ։

կրկին



ՄԱՆՏՈՆ ԵԱԹՍԻՍԱՑ Ի ԳԱՆԱՆԿԶԱՐՔԱ ՆՈՅՏՐՆ

Պարգևաշնչեան Սամփսոն Բռասսէալցին Հզաւրակէզ Թշնամեաց Հոգւոց Հեթանոսաց
Օծանդակ առ շարն ։

Կայր 'ի հնումն այր մի անուանեալ Սամսոն Թարսո-
սոյ , զոր միջոց հարիւր ամ ժամանակի եռ ծփանօք
պանծն իւր աղօթից , և զժուարին արտաքս եկանէր
'ի յայրէ յորում բնակեալ էր , և ընչել լով՝ զի մի զու-
ցէ զոգէ առիթ մեղանչել առ Աստ(ուա)ծ , անցուցանել լով
զօրն ողջոյն պահօք՝ և զգիշեր ռան հսկել լով , ամ բնակիչք յայնմ քա-
ղաքի այնքան սրբութեամբ ընդունէին նմա՝ և այնքան՝ մեծա-
պէս պատուէին պաղօթս նորա , մինչ զի յամ պաղատանս նոցա առ-
յերկինս՝ խնդրէին 'ի նմանէ աղօթել վ(աս)ն նոցա , և յոյժ ամ պա-
տարագէր նա վ(աս)ն հիւանդի ուրուք՝ ողջանայր իսկոյն ։

Պատահեցաւ զի դուստրն կայսեր յայնմ քաղաքի տկարա-
ցաւ վտանգաւոր ցաւօք , և զի բժիշկքն ոչ կարէին ծանօթա-
նալ զտկարութիւնն նորա , բայց ամ հնարիւք յետևէին գտա-
նել զճար իւր , այլ փոխանակ բժշկելոյ՝ յաւելացուցանէին ըզ-
հիւանդութիւնն , որով կայսրն յոյժ անմխիթարէր , վ(աս)ն զի սիրէր
յոյժ զդուստրն իւր , վասն որոյ տեսանելով նորա զի մարդկային
օգնականութիւն 'ի զուր էր՝ յաւուր միում առաջադրեաց առա-
քել զդուստրն իւր առ Սամսոն Թառսոսա ։

Այնմ այն նախարարքն գովեցին զառաջադրութիւն նորա ,
և թագաւորական իշխանքն տարան զդուստրն թագաւորին առ
Սամսոնն , զոր թէ և 'ի տես զառամութեաննէր՝ բայց զմայլեցաւ
'ի գեղեցկութենէ դստերն , և սիրով հայեցաւ առ նա , յայնմ
պահու ժամանակի ջնջեաց սատանայն յունկն նորա , ասելով՝
ծիլ Սամսոն , մի թողուցուս անցանել այսպիսի բախտաւոր ժա-
մանակ , ասա չիշխանսն կայսեր զի հարկաւոր է թողուլ զդուստրն
անցուցանել զառաջնկայ գիշերս , յայնմ յայրի քում , զի տեսցես
եթէ յանձիցէ Աստ(ուա)ծ բժշկել նմա , և դու աղօթեսցես վ(աս)ն նորա ,
և ասա նոցա գալ առ քեզ վաղիւն զի տարցեն նմա ։

Գօլով բնութիւնն մարդկային տկար , յետևեաց Սամ-
սոնն

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ЗССР-Арм.ССР
им. А. Мясникяна

տօնս զխորհուրդս չարին, և կատարեաց զոր ինչ ուսաւ 'ի սատանայէ, բայց իշխանքն, առաջ քան զհնդունիլն թողուլ զաքադուստրն, առաքեցին մի 'ի նոցանէ զի գիտասցեն զհաճութ կայսերն, կայսրն այն՝ զոր բոլորովին հաւատացեալ էր բարսիմային, երբէք չէր ընկալեալ թողուլ զդուստրն իւր ընդ նմա և պատասխանեաց այսպէս, ընդունիմ զի մնասցէ դուստրն իմ ընդ Աբ աւն այն, և կարէ նա պահել որքան կամիցի, և ես միամտեմ յայդմ մասին:

Յետ ստանալոյն հրամանն թագաւորին, թողին դուստրն ընդ միայնակեացն և դարձան, և յորժամ գիշեր էհաս, դիմեաց սատանայն առ Աճոտոն և ասաց չթողուս մնցանել զայս պատեհ դիպուածքն, ընդ այսպէս գեղեցիկ ստեղծուածոյ, մի երկնչիր, դուստրդ այդ չէ հուշակելոյ զոր հրաժարիցես, և եթէ իցէ նա այնքան անմտութ՝ զի յայտնեսցէ զայդ, ոչ դէ հաւատալոց ատեանն քաղաքն, և աշխարհս ամ՝ ոչ հաւատան երբէք որոք այսպէս առաքինին ընդէմ քոյ, դու կարողես գործել զամ ինչ թարց պատժոյ, յաղագս համբաւոյ, պատուոյ և իմաստութեան զոր ստացար, Տարաբախտ բարսիսայն այնքան տկարէր, մինչ ունկն դիր եղև թշնամոյն մարդկան, մերձեցաւ առ դուստրն՝ և զըկեաց նմա, և 'ի կիտի միոյ կորոյս առաքինութիւն հարիւր ամեաամբարեալ:

Յետ սակաւ ժամանակի զոր ժառանգեաց զմեղսն, հազարաւոր ցաւք կալան զնա, տիւ և գիշեր և ասաց սատանայն Ով ողորմելի՝ դու ես որ աւերեցեր զխս, դու ես որ շրջապատեալ կայիր ինև զբոլոր ժամանակն, և ջանայիր խաբել զխս, և յայժմ 'ի աւարտ վերջաւորեցեր զչար խորհուրդս, բհ Աճոտոն պատասխանեաց սատանայն, մի նախատեր զխս վս միթ առութէն զոր դու վայելեցեր, սորջասցիս ես, բայց զինչ աւել տալոյ բախտութիւն քոյ, զայս, զի դուստրն թագաւորին յղի է, և մեղանչումն քոյ յայտարակելոց է, և դու լինելոց ես ծաղր և յամայնից այնոցիկ որք պատուէին և փառաւորեին քեզ այժմ, և թագաւորն հրամայելոց է քեզ չարչարանօք սպանանել:

Երկեաւ բարսիսայն, ասաց սատանայն, զինչ արարից զի տրգելեցից զայս ուտարութիւնն նախատանաց իմոց, վս ծած-

կեցոյ զմեղքն քոյ, զայս պարտիս յաւել և ոչ մեղանչել, այսպէս.
սպանանել զդուստրն թագաւորին և թաղել զնա 'ի մի կողմ
լերին, և երբ պատգամաւորք հկեսցեն վասն նորա առ քեզ՝ ասա
ցնոսա, թէ դու բժշկեցեր զնա, և նա ել եւ այլ յայսմանէ գնաց
առ ամուսնին իւր, դոքա հաւատասցեն քեզ, և որպէս լը-
ցեն զաղաչքն և զեղծն յանձին, և թագաւոր հայր նորա տխրե-
լոյս լոյժ ապա յետ զանազան ունայն յետևմանց դադարեսցեն ։
Բարցի լայս լեալ յայս միայնակեացն, յետ ևեաց խոր-
հրդեան չարին սպանանեաց զդուստրն և թաղեաց 'ի մի կողմն լեր-
ին, և 'ի միւս աւուրն պատասխանեաց որ ինչ պատահիցեն այլք
'ի սատանայէ և եկեալ մարդն յարքայէ, որոնեցին զնա, ջանացողութ
վա դադեր արքային՝ բայց 'ի վեր եղև և ոչինչ գիտել կարացին
զնմանէ, և իբրև յուսահատեցան որոնելոյ վա նդ՝ երևեցաւ նը
սատանայն և ասաց նոցա, 'ի գուր որոնէք, և պատմեաց նոցա զոր
ինչ անցք անցին 'ի մէջ միայնակեցին և դստերն թագաւորին,
և ապա ասացեաց նոցա զտեղին այն զոր թաղեցաւ իշխանուհին իսկոյն չո-
գան 'ի լայրն, և ըմբռնեցին զբարբառայն, և գտին զմարմինն
դստեր 'ի տեղին ուր սատանայն ասացեալ էր նոցա, յորմէ հանե-
ցին զմարմինն՝ և տարան զայն բարբառայն առ պալատն ։
Յորժամ ետես թագաւորն զդուստրն իւր մեռեալ, և
ծանօթացաւ յամ անցից, արտասուեաց և կոծեաց ուժգին, ժո-
ղովեաց դատաւորքն յանձին, և պատմեաց զամ մեղս բարբառային
և խնդրեաց զկարծիս նոցա զինչ պատիժ տալ հարկէ, ամենեքեան
վճռեցին նմայ մեռանիլ, և յորժամ պատրաստեցին զկախաղանն,
և եկաւ միայնակեացն զսանդուղքն 'ի վեր առ 'ի կախիլ, յայնժամ
շշնջեաց սատանայն յունկն նորա այսպէս ասելով, եթէ զիս
պաշտիցես ազատեցից զքեզ 'ի տանջանաց և ծանիլոյ քեզ
երկու հալոց մղոն հեռի 'ի քաղաքէ, յորում ընդունելոցեն քեզ
'ի նոյն սրբութեան որպէս էիր յառաջ քան զայս, ընդունեցի
ասաց միայնակեացն փրկեա զիս, և պաշտեցից զքեզ, տուր ինձ
կանխագոյն նշան մի պաշտելութեանն ասաց սատանայն, առ որ
երկրպագեաց նմա խոնարհեցուցանելով զգլուխն իւր և ասաց ե-
տու զանձս իմ քեզ, յայնժամ բարձրաձայն ասաց սատանայն ծվ
բարբառայ միւնիթարեցայ և ընկալայ զոր ինչ ցանկայի. ասելով
զայս

զայս Թէքեաց յերեսս միայնակեցոյն՝ և աներևոյթ եղև, և խա-
բեցեալ Սատանայն կամեցաւ ։

Դիտասցեն այսու զի խորհուրդք չարք երբեմն ելանեն 'ի բարեպաշտունեղ մտաց, որ եթէ արգելցեն վաղվաղակի յորժամ յայտնեսցի՝ չէ լինելոց քրէական, և պարտ է ծածկել զգուշութ 'ի յարգանդի իբրև յառաջին յորդորիչ առ մեղս, վասն զի մո-լութիւն բնականապէս ծնանի զմոլութիւնս, և երբեմն քայլ մի սահիլն առաքինութենէ՝ յաճախապէս յետևին այնպիսի դի-պուածք չարք, և առաջնորդին 'ի յաւերումն թարց տեսանե-լոյ նախապէս ։

Թագաւոր ոմն էհարց՝ ցդերասանն, թէ որպէս 'ի ձեռն ար-բեցութեան ցնորին մարդիկք 'ի խելաց, և նոցա հետապօտեալ գտին, կոյր, կաղ, և մուրիկ՝ մատուցին զնա 'ի պալատ արքային ։ ծանուցեալ արքային՝ եկաց 'ի թագստի, և եդին առաջի նոցա սեղան՝ և յորդ գինի, իբրև յագեալք արբեցան՝ առեալ կոյրն զգինին բաժակաւ ասէր՝ տեսանեմ զոյակն՝ զի հանգոյն կարկե-հանի փայլէ ։ իսկ կաղն սրտմտեալ ասէր լուռ կաց ստախօս՝ զի աքացի հարեալ զհոգիտ 'ի միաբնոյդ աստուստ անդամեմ ։ և մու-րիկն անտուստ սպառնայր խրոխտալով, հո՛ր ասէ՝ և մի խնայեր, թէ և սատակեսցի՝ պատրաստեմ տալ զգին արեան դորա մինչև երկու հազար դահեկանս ։

Իբրև տեսեալ արքային զամ արարս սոցա ։ ետ արձակել 'ի պալատէ արքունւոյ ։ և ասէ ցխորհրդակից նախարարս իւր ։ կարծեմ թէ ոչ միայն 'ի ձեռն արբեցութեան ցնորին մարդիկք 'ի խելաց, այլ և 'ի ձեռն փարթամութեան՝ զի եթէ սակաւ արբումն գինւոյ՝ այնքան զօրաւորացոյց ողորմելի արանցն այնոցիկ, որքան առաւել զօրաւորա-նայ մարդ՝ յորժամ հասանէ փառաւորութեան ։ վասն որոյ զգուշանալ պարտ է յոյժ ։ Որպէս և ասացեալ են պարսիկք, թէ արբիլ՝ և զգուշ լինիլ ։ ոչէ արժան, և եթէ ոք գտցէ հարստութիւն՝ և ոչ գործէ զմոլութիւն, այնէ առաքինի ։

Հ.

[illegible]

Հրաշափիլ մեզ պայծառ՝ նորատոյն թա  նիս ։
Զաւեսեալք զմկրտարար՝ յաքեթեան տոհ  միս ։
Զի նորէ նորոգ՝ ծաղկօք պճնարձա  լի ։
Թուրել գնոտ անուշ՝ նոր թուրաստա  նի ։
Ունելով զփող՝ քաղցրատոյն գո  չէ ։
յակլքիս նորոգման՝ ընդ մեզ աճե  տէ ։
Աղաւնեայ նրման ընդ շուղ ծիլծեռ  նոյն ։
ունի 'ի թեւ րսին՝ ձայնէ զմեզ ող  ջոյն ։
Զընծայն ևանց՝ ասէ դուք ե  կէք ։
Ծաղիկք յայտնեցան՝ եկայք և տե  սէք ։
Զի ջուր թարկութեան՝ սաստիկ անձրե  ւի ։
արդ ցածուցեալ է՝ սաղարդ երե  ւի ։
Աղօթք մեր ի ծուլութեան՝ 'ի նմայ լռեա  ցաւ ։
սիրտ թարերարին՝ 'ի մեզ քաղցրա  ցաւ ։

Այս լուր աղաւնւոյն՝ նորս աւետարա  րի ։
օրինակ հընոյն՝ նորըս ցուցա  նի ։
Զի աւքըս հայոց՝ տոհմիւք պատուե  լի ։
և համայն աղգաց՝ գերօ երանե  լի ։
Ուր կարաց պահել՝ զհամբաւ իւր թա  րի ։
ընդ ոստնուլ ջանայր՝ հարաւ ընդ գետ  նի ։
Զորմէ մինչև ցարդ՝ ոչ ոք խորհե  ցաւ ։
և ոչ օլինսամ՝ ումեք շարժե  ցաւ ։
Այանորոյ ընդ ծով՝ ալէ կոծե  ցաւ ։
և սասանիկ վէտօք՝ անպիտանա  ցաւ ։

Ամենայն գլթած ծծն անքըն  նինն ։
որ սիրտ լթադաւանորաց ունի 'ի ձե  ռին ։
նայեցաւ 'ի մեզ յայս դարըս վեր  ջին ։
որ մեզ քաղցրացոյց՝ թարձր տիրու  հին ։

Ճայթեաց ՚ի մէջ լոյս՝ ՚ի յարեւմը տէ ։
Վշնորհս ողորմութեան վեհագոյն գա հէ ։
Կայսեր ըռուսաց ԵԿԱՏԵՐԻ Նէ ։
յաղթող թագուհւոյն՝ կայսեր բազար մէ ։
Որ հետեւեցաւ՝ տէրունեան քա նի ։
առակաւ խրատոյ՝ յաւետարա նի ։
Վասն որոյ տանի՝ փրկչէն երա նի ։
զի խօթացելոցս՝ քաղցրութեամբ նա յէ ։
Զխոցելոցս վէրօք՝ ՚ի ճանապար հի ։
զոր անցաւորաց՝ անփոյթ համա րի ։
Սա շնորհիւ իւրով՝ առ մեզ հասա նի ։
վէրացըս դընէ՝ զձէթ եւ գի նի ։

Ո՜վ քարձրագոյն տէր՝ մայր ողորմու թեան ։
մեծացուցանեմք՝ ըզքոյդ գթու թեան ։
Մաղթեմք յարաժամ՝ առ տէր զօրու թեան ։
հաստատեսցէ մեզ միայն՝ գահըդ բարձրու թեան ։

Այս շնորհս տիրուհւոյն՝ զմեզ ծանուցա նէ ։
աղաւնին մաքուր՝ յողնոծա զար մէ ։
Զշեղ ողորմութեան՝ վեհագոյն մօ րէ ։
գեր ուրախութեամբ՝ ըզմեզ ցուցա նէ ։
Այսէ երջանիկ՝ րաբունըն քա րի ։
սրբազան Յովսէփ՝ արդութեանց տոհ մի ։
Հովիւ մեր հօտից՝ ռուսաց աշխար հի ։
շառաւիղ բարի՝ ՍԲ Էջմիած նի ։

Սա երկրորդ մովսէս՝ ՚ի մեզ տեսա նի ։
աղքատէր գոլոյն՝ նորս իսրայէ լի ։
Զի նոյ ազատէր՝ ըզ ազգըն գե րի ։
քանզի վերջապէն՝ հին փարաւո նի ։
Միջնորդեալ կոչէր՝ յերկիր աւե տեաց ։
հաղորդել շնորհաց՝ արքային կե նաց ։
Քաղաքսն փրկեաց՝ ՚ի ձեռաց դիւա նաց ։

Անցոյց ընդ ցամաք՝ զկեանըս կարկա ռեաց :
Իբր սա նոյնապէս՝ ընդ իմամար տեալ .
Ընդ չար գազանին՝ որ էր զմեզ տի րեալ :
Զի թակարդ որոյ՝ յար 'ի մեզ լա րեալ .
Յաղտիւք ծուլութեան՝ զկեանըս մեր գե րեալ :
Ցորմէ և խրատիւք՝ զմեզ ուսուցա նէ .
'ի գերութենէ՝ խնամով ազա տէ :
Առ ԿԱՅՍՐ'Ն ռուսաց՝ միշտ բարեխօ սէ .
Փրկութեան ըզշնորհս՝ ընդ մեզ վայե լէ :
Զորոյ մատուցաւք՝ շնորհակալու թիւն .
և զաշխատանացն՝ տալ գոհու թիւն :
Որոյ միշտ տքնի՝ հայցել զփրկու թիւն .
'ի մեզ. գթալով՝ հօրն քաղցրու թիւն :

Թռչուն գովելի՝ նորըդ ազդա րար .
անխօս և խօսուն՝ ձայն ուրախա րար :

Այլ թէ դու մօրէ՝ նորադոյն ծը նար .
տաս մեզ քաղցրութիւն՝ ով զուարճա րար :

Դու զուրախացիր՝ ընդ քոյ սիրո ղաց .
որք ցանկան ըզ.քեզ՝ յար ընթերցո ղաց :

Ն.քեզ ցնծութիւն՝ զի յառաջ ե լեր .
զայգիս փրկութիւն՝ զմեզ աւետե ցեր :

Ունիս և ընդ քեզ՝ ծաղկունք պատուե լի .
զանազան զլուր՝ քաղցրադոյն բա նի :

Սոյնպէս և խըլրատ՝ նման մարգար տոյ .
'ի քեզ տեսանի՝ յեռեալ ընդ ոսկ ւոյ :

Խոնարհութիւն՝ մարդկային բա րուց .
ոչ թէ հասարակ՝ այլ ընդ սակա ւուց :

Բամբ

Բամք գոհ որք սիրեն՝ գոհ և բամք ա — տողք ։
էն դասք որք գովեն՝ գոհ և քամբա — սողք ։

Ինքեզ երանի՝ և լինիս գո — վեալ ։
Եթէ ոչ դրդիցիս՝ գոլով տոտը — մեծալ ։

Յանկացողք քանից՝ և սիրողք քա — րեաց ։
Ոչ երբէք առեն՝ ըզնոյն սիրո — ղաց ։

Այնպէս ապաքանք՝ և գշտողք քա — րեաց ։
խոտեն զքարիս՝ և գովեն չա — րեաց ։

Ո՛վ դու քաղցրախօս՝ մի վարանի — ցիս ։
և մի ՚ի քանից՝ նոցա տրտմի — ցիս ։

Գրուածս իմ փոքրիկ՝ ընդ քեզ ունի — լով ։
Յորոց պատահին՝ զայս ընթեռնը — լով ։

Ի դիմաց իմոց՝ դու աղերսես — ցես ։
և զմաղթանս իմ՝ զնոսա ասա — ցես ։

Նա որ զայս գրեաց՝ չէ հմուտ քա — նի ։
և ոչ տաղաչափ ոտանաւո — րի ։

Ի՞ այս խնդութիւն՝ իմս ծնըն — դեան ։
Խնդակից եղև՝ յիւր կարողու — թեան ։

Նման քամբասել՝ մի վարկանի — ջիք ։
Այլ գթածօրէն՝ նըմայ ներես — ջիք ։

Յորքան ժամանակ՝ մընայ կենդա — նի ։
Պատրաստ ծառայ՝ նոյ ձեզ լինի — ցի ։

Երկու որդւոց, մուրացիկք եկեալ առ հայրն 'ի Սահակ, պատմ-
ատուն կեղեւտուք առանց շապկի, մինչ գի մերկ երևէին,
կոչ ումութ է խնդրէին 'ի նմանէ. և իբրև զհանդերձս 'ի նմանէ
խնդրէին' այլև ոչ լուութեամբ ունէին դիր լինէր քանից նոցա ։
Իսկ կոչեալ առ ինքն զմին յաշակերտաց իւրոց ասէ ցնա
երթ 'ի մայրի և անդ յայն նիշ տեղւոջ գտանես զծառ երկճղի
և առեալ զհանդերձս որ անդ կան բերցես այսր ։
